տում և ոչ էլ որևէ ըմպելիք է խմում: Դրա կերակուրը այդ է, ինչ որ տեսնում ես:

Թագավորը լսեց դրա մասին, մարդ ուղարկեց դրա մոտ, թե ինչո՞ւ ես անհավատի գերեզմանին ծառայում, չէ՞ որ դու մուսուլման ես: Սա պատասխանեց, թե սա ինձ բժշկեց, այդ պատճառով ծառայում եմ սրան, բայց իմ հավատքը պահպանում եմ: Ապա թույլ տվին՝ ասելով, որպես կամենում է, թող մնա և իր հավատը պահպանի: Ահա նրա այս պատմությունը, որ լսեցի և տեսա:

Բայց երբ վերադարձա մեր երկիրը, լսեցի, որ նրա գերեզմանը հարկի տակ է դրված: Դրանից հետո ֆրանկների դեսպաններ են եկել և խոսքով հանդիմանել են թագավորին, թե դուք մեռելներից հարկ եք պահանջում: Այս պատճառով վերացրել են հարկը: Այսքան և այսպես տեղի ունեցավ տեր Հակոբի մահը:

ԳԼՈՒԽ ԽԷ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՎՐԱՑԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Վրացիների պատմությունը համառոտ կգրեմ, քանզի առաջին ու մեծ Շահ Աբասը Կախեթի երկիրը քանդեց ու ավերեց և Աղեքսանդրի որդի Թամրազին՝ Աղեքսանդր թագավորի որդուն, իր հետ Պարսկաստան տարավ: Այնտեղ պահելով որոշ ժամանակ, իշխանություն տվեց և ուղարկեց նրա հայրենի երկիրը՝ Կախեթը տիրելու, բայց և շահին հնազանդ մնալ: Նա այնտեղ էր մնում ըստ շահի պատվերների:

Շահ Սբասից հետո թագավոր դարձավ սրա թոռ Շահ Սաֆին, իսկ սրանից հետո սրա որդի փոքր Շահ Աբասը: Սրա ժամանակ Թիֆլիսում իշխան էր տոհմով Բագրատունի Ռոստոմը: Սա թշնամացավ Թամրազին և կամենում էր սրա երկիրը հափշտակել և նրան ենթարկել իր իշխանությանը: Իսկ Թամրազը չէր հնազանդվում նրան և չէր թողնում, որ նրա իշխանությունը թափանցի իր տերությունը: Իսկ Ռոստոմը զրգռվեց պատերազմելու նրա դեմ: Թամրազը նույնպես զինվեց ընդդեմ նրա մարտ պատերազմի:

Նա մի որդի ուներ Դավիթ անունով, որ ծնված էր իր Փարի կնոջից. սա Թիֆլիսի Գորգի թագավորի դուստրն էր և Լավարսափի

քույրը: Այս Դավիթը խնայեց հոր ծերությունը և չթողեց պատերազմի մեջ մտնել, այլ ինքը մտավ պատերազմական տարազի մեջ, զինվեց ընդդեմ նրանց: Իսկ Թիֆլիսի զորքը Ալավերդում էր: Պարսից զորքերից ուղարկեցին մի կողմ, որտեղ դարանամուտ կար, պատերազմը սկսվեց, Դավիթը մեծ քաջությամբ մտավ Ռոստոմի զորքի բազմության մեջ, իսկ պարսիկները, որ գտնվում էին դարանում, երբ լսեցին ռազմակոչերի ձայնը, այդ ժամանակ նրանք դուրս եկան Կախեթի զորքերի մյուս կողմից և մեջտեղ առնելով վրաց զորքերը՝ հանդիպեցին Դավթին, խփեցին, սպանին արի Դավթին:

Զորքերը տեսնելով Դավթի մահը, թողին փախան, իսկ պարսիկները հալածեցին նրանց մինչև Կախեթի սահմանները: Իսկ Թամրազը մնաց հեծեծանքներում և դառը կսկիծների մեջ: Երբ տեսավ, որ չի կարող նրանց դիմադրել, ուղղություն վերցրեց գնալու շահի մոտ՝ մտածելով, թե ավելի լավ է շահը սպանի իրեն, քան թե իր ծառայակիցը: Եվ վեր կացավ գնաց:

Շահ Աբաս թագավորը նրան ընդունեց սիրալիր և իր մոտ պահեց որոշ ժամանակ, ապա նրան տվեց իրավունք ու իշխանություն՝ տիրելու իր երկիրը: Սաստ գրեց Ռոստոմին, որ իշխանություն չունենա Թամրազի նկատմամբ: Ապա արձակեց նրան գալու իր երկիրը: Եվ ելավ թագավորի մոտից գնաց, բայց չհասավ իր երկիրը, այլ մեռավ ճանապարհին:

Իսկ նրա Հերակլ թոռը, որ նրա որդու՝ Դավթի որդին էր, երբ լսեց իր պապի մահը, վախեցավ մնալ այնտեղ Կախեթում, այլ ելավ Կախեթից և գնաց Մոսկվա և այնտեղ էր մնում:

Շահ Աբասը բազմաթիվ անգամ նրա մոտ հրավիրակ ուղարկեց իր մոտ գնալու, բայց նա չեկավ՝ մահից վախենալով: Շահ Աբասից հետո թագավոր ելավ նրա որդի Շահ Սուլեյմանը: Սա ջուղայեցի Գրիգոր անունով մի մարդ ուղարկեց նամակով ու երդումով, որ գնաց, նրան բերեց Խզիրան, որ է Ղազվինը, քանզի շահը այնտեղ էր 1124 (1675) թվի ապրիլի 23-ին: Այնտեղ էր նաև մեծ կաթողիկոս Հակոբը, նաև մենք՝ նրա ծառայության մեջ: